



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2021 թվականի թիվ 79-Ա

ք. Երևան

«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՄՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի ապրիլի 23-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 14 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՄՊ ընկերության (այսուհետ՝ նաև Հեռարձակող) կողմից իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի ապրիլի 23-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի ապրիլի 23-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2021 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողով ներկայացրել է իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Հեռարձակողն իր կողմից Հանձնաժողով ներկայացրված գրավոր բացատրությունում (ծանուցման մեջ նշված հանգամանքների) նշել է, որ «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՄՊ ընկերությունը լիցենզավորվել և իր գործունեությունը, որպես Հեռարձակող սկսել է 2021 թվականից, ինչը նշանակում է, որ վերջինիս 2020 թվականի գործունեությունը Հանձնաժողովի կողմից վերահսկողության ենթակա չի եղել, ուստի 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունն Օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվել:

Հեռարձակողի պնդմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջն ուղղված է այն Հեռարձակողներին և օպերատորներին, որոնք գործունեություն են

իրականացրել նաև նախորդ տարի, հետևաբար Հանձնաժողով են ներկայացրել 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը, որպեսզի ապահովվեն իրենց ֆինանսական աղբյուրների թափանցիկությունն ու վերահսկողությունն այն ժամանակահատվածի համար, որում իրականացվել է համապատասխան գործունեություն:

Ամփոփելով իր կողմից ներկայացված բացատրությունը՝ Հեռարձակողը ևս մեկ անգամ նշել է, որ իր կողմից նշված իրավանորմերի («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 5-րդ, 8-րդ հոդվածներ և 9-րդ հոդվածի 2-րդ մաս) համակարգային վերլուծության համատեքստում, Հեռարձակողի 19-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկատվություն պահանջելը և դրա հետ կապված իրավական պատասխանատվության միջոց կիրառելը այս դեպքում կարող է դիտվել որպես ձևական պահանջների պահպանման գործողություն, քանզի դա չի ծառայելու տվյալ հոդվածով նախատեսված իրավակարգավորման բուն նպատակին (ապահովել ընկերության ֆինանսական աղբյուրների հրապարակայնացումը կամ թափանցիկությունը վերահսկման ենթակա գործունեության և դրա իրականացման ժամանակահատվածի մասով):

Մինևույն ժամանակ Հեռարձակողն հայտնում է, որ իր գործունեությունն իրականացրել է բարեխիղճ և՛ Օրենքի, և՛ նորմատիվ իրավական այլ ակտերի բոլոր պահանջներին համահունչ, իսկ քննարկվող հանգամանքը պայմանավորված է եղել ոլորտում գործունեությունը նոր սկսելու հանգամանքով նաև: Ուստի, հաշվի առնելով իր կողմից ներկայացված բացատրությունը, Հեռարձակողը խնդրում է Հանձնաժողովին ձեռնպահ մնալ իր նկատմամբ իրավական պատասխանատվության միջոցների կիրառումից:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» թիվ ՀՕ-395-Ն օրենքն ընդունվել է 2020 թվականի հուլիսի 16-ին, որը պաշտոնական հրապարակումների միասնական կայքում (arlis.am) հրապարակվել է 2020 թվականի օգոստոսի 6-ին և Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին: Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ սույն օրենքը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների, օպերատորների, կարգավորող պետական մարմնի և հանրային տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի գործունեության կառավարման ապահովող և հսկողություն իրականացնող մարմնի վրա:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերի համաձայն՝

1) **տեսալսողական մեդիաձառայություն** մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիաձառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակագործ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

23) **հեղինակագրում**՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքը չի տարածվում համացանցի, բացառությամբ ցանցային օպերատորների գործունեության, տեսալսողական արտադրանքին գուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվության (ինտերակտիվ հեռուստատեսության) վրա:

«ՏՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերությունը Օրենքով սահմանված կարգով հեղինակագրվել է և Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 116-Ա որոշման համաձայն վերջինիս տրամադրվել է հեղինակագրման թիվ ՀՎՈ27 վկայականը, Ուստի, Օրենքով սահմանված նորմերի պահանջները պարտադիր են դարձել Հեռարձակողի համար թիվ 116-Ա որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, այլ ոչ թե Հեռարձակողի կողմից 2021 թվականի հունվարի 15-ին հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման թիվ ԵՀ 298 լիցենզիա ստանալու օրվանից:

Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմնին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Հաշվի առնելով, որ Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին և տեսալսողական մեդիայի ոլորտում սահմանվել են նոր կարգավորումներ, ուստի Հանձնաժողովը, և՛ 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 05-475, և՛ 2021 թվականի մարտի 12-ի թիվ 05-230 գրություններով Հեռարձակողին տեղեկացրել է Օրենքի վերոնշյալ դրույթի մասին և թիվ 05-230 գրությամբ առաջարկել է Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն, սակայն մինչև վարչական վարույթի հարուցումը Հեռարձակողի կողմից պահանջվող տեղեկատվություն, կամ որևէ բացատրություն, որ Օրենքի նշված դրույթը Հեռարձակողին չի վերաբերվում, Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը, որի արդյունքում հայտնի է դարձել, որ Հեռարձակողը մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը Հանձնաժողով չի ներկայացրել իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար պարտավորություն է սահմանված՝ յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը Հանձնաժողովին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն, սակայն Հեռարձակողի կողմից չի պահպանվել Օրենքի պահանջը և Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը, դրանով իսկ խախտելով Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից հեղինակագրված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական

տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթի պահանջը: Եվ Հեռարձակողի այն պնդումը, որ Հանձնաժողովի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկատվություն պահանջելը և դրա հետ կապված իրավական պատասխանատվության միջոց կիրառելը կարող է դիտվել որպես ձևական պահանջների պահպանման գործողության, քանզի դա չի ծառայելու տվյալ հոդվածով նախատեսված իրավակարգավորման բուն նպատակին, անհիմն է, քանի որ Հեռարձակողի բացատրությունում մատնանշված իրավական դրույթների համադրումը փաստական հանգամանքների հետ սխալ մեկնաբանությունների է բերում, ինչի հետևանքով բացատրության հիմքում ընկած փաստերն անընդունելի են Հանձնաժողովի կողմից: 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը Հանձնաժողովի կողմից պահանջելը ինքնանպատակ չէ (ըստ Հեռարձակողի դրա նպատակը ընկերության ֆինանսական աղբյուրների հրապարակայնացումը կամ թափանցիկությունը վերահսկման ենթակա գործունեության և դրա իրականացման ժամանակահատվածի մասով), այլ Օրենքի պահանջ է և հասույթի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը Հանձնաժողովին անհրաժեշտ է Օրենքի պահանջի խախտում արձանագրելու դեպքում տուգանք կիրառելու համար, քանի որ Օրենքով տուգանքը նշանակվում է նաև հասույթի չափը հաշվի առնելով, իսկ Հեռարձակողի կողմից վարչական վարույթի հարուցումից հետո 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը (ներկայացվել է 2021 թվականի ապրիլի 28-ին) Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ Հանձնաժողով ներկայացնելը և բացատրությունը տալը, բավարար հիմք չէ Հեռարձակողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը:

1) գրավոր նախագրուշացում.

2) տուգանք.

3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասը սահմանում է.

«Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

27 մայիսի 2021թ.

ք. Երևան